

«Արարատ» օրաթերթը կը ներկայացնէ «Մետիամարտ»-ի «Ծանօթ-անծանօթ քաղաքներ» շարքը: Յաճախ միմեանց կ'ըսեն, որ «մենք մեր երկիրը չենք ճանչնար», հիմնականին մէջ նկատի ունենալով գեղատեսիլ վայրերը, բնական եւ ճարտարապետական յուշարձանները: Սակայն կրնանք պնդել, որ քիչ բան գիտենք նաեւ այն քաղաքներուն մասին, որոնք շատ մօտ են Երեւանին: Ուստի այս շարքով պիտի փորձենք որոշ չափով փակել այդ բացը եւ ներկայացնել 10 քաղաքներ, որոնք զբօսաշրջական չեն համարուիր (բացառութեամբ Էջմիածնի), սակայն ունին իրենց հնայքը:

ԾԱՆՕԹ-ԱՆԾԱՆՕԹ ՔԱՂԱՔՆԵՐ՝

ՎԵՂԻ

Քաղաք-կիրճի մասին

Երեւանէն 35 քմ հեռավորութեան վրայ՝ Միջինարաքսեան գոգավորութեան մէջ, Վեղի գետի ձախափնեայ սարահարթին մէջ կը գտնուի Վեղի քաղաքը, որ աւելի յայտնի է իր գինիով եւ այլ խմիչքներով, ստորգետնեայ հանքային ջուրերու պաշարներով ու անուշահամ պտուղներով:



Քաղաքի մասին առաջին յիշատակութիւնները կու գան ուրարտական ժամանակներէն: Անուան մասին կան շարք մը վարկածներ, որոնցմէ մեկուն համաձայն՝ այն յառաջացած է պարսկերէնէն եւ կը նշակէ կիրճ:

Ի դէպ, տարբեր ժամանակներու մէջ քաղաքը տարբեր կերպ կոչուած է՝ Բելուկ Վեղի, Բելուք Վեղի, Բոյուք Վեղի, Վեղի Մեծ, Վեղի Վերին, Վետե, Վետի եւ միայն 1946-ին վերանուանուած է Վեղի, իսկ 1995-ին՝ ստացած է քաղաքի կարգավիճակ:

Վեղիի մէջ բնիկները բաւական քիչ են: Հիմնականին մէջ այստեղ կ'ապրին Արեւմտեան Հայաստանի Վան, Շատախ եւ Մուշ նահանգներէն գաղթածներու ժառանգները: Սումգայիթի ջարդերէն յետոյ եւս մեծ թիւով գաղթականներն եկած են այստեղ: Շատ են նաեւ Մարտունիէն, Սիսիանէն ու Եղեգնաձորէն եկածները: Իւրաքանչիւր ընտանիք այստեղ բերած է իր գերդաստանին ու ծննդավայրին բնորոշ սովորոյթները, խոհանոցն ու բարբառը: Չնայած «հաւաքածու քաղաքի» հանգամանքին՝ բնակիչները այստեղ բաւական հաշտ ու խաղաղ կ'ապրին:

Վեղիի յուշարձանները

Քաղաքին մէջ շատ են յուշարձանները, որոնք հիմնականին մէջ տեղակայուած են կեդրոնական հատուածին մէջ գտնուող բլուրի վրայ:



Այստեղ կը գտնուի Հայոց ցեղասպանութեան զոհերուն յիշատակը յանդիմանող յուշարձանը, որ կառուցուած է Ծիծեռնակաբերդի յուշահամալիրի նմանութեամբ:

Սակայն անմար կրակը այստեղ կը վառի միայն Ապրիլի 24-ին: Յուշահամալիրին այցելուները այստեղ կրնան տեսնել նաեւ Երկրորդ աշխարհամարտի, ինչպէս նաեւ Արցախեան ազատամարտի զոհերուն նուիրուած յուշարձանները:

Վեղիի յուշարձաններէն է նաեւ 2001-ին օծուած Սուրբ Աստուածածին եկեղեցին: Կ'ըսեն՝ Վետիի մէջ հին, կիսաքանդ մատուռ եղած է, որուն հիման վրայ քաղաքի բնակիչ Ետկար Շապոյեանը, իր ընտանիքի անդամներուն օգնութեամբ, կառուցած է եկեղեցին: Ի դէպ, կարմիր տուֆով կառուցուած եկեղեցուն պատկերը Ետկար Շապոյեանը տեսած է երազին մէջ եւ շինարարութեան ընթացքին նոյնութեամբ կրկնած է ապա:

Ո՛ր երթալ Վեղիի մէջ

Քաղաքի կեդրոնական այգիին մէջ տեղակայուած են նախորդ դարէն պահպանուած սրճարանները, արագ սնունդի կէտերը, սեղանի թենիսի ու պիլիատի սրահները:

Ժամանցի կեդրոնները այստեղ շատ չեն՝ երիտասարդները կ'ըսեն, որ ազատ ժամանակը հիմնականին մէջ կը նախընտրէին անցընել Երեւանի մէջ, ոմանք ալ կը գոհանան քաղաքային այգիին մէջ ամեն շաբաթ կազմակերպուող համերգներով:

Այս առումով՝ Վեղիի մէջ սպասուած օրեր կըն համարելին ամառնային հինգշաբթիները, երբ բացօթեայ բեմի վրայ կը կազմակերպուին տեղի ակումբի սաներուն պարեր:

րի եւ երգի համերգները: Երբեմն կ'ըլլային նաեւ հրաւիրուած արուեստագետներ:



Նորաբաց մշակութային տան մէջ երբեմն կը բեմադրուին թատերական ներկայացումներ:

Հողակտորի համի մասին

Վեղիի բնակիչներուն հիմնական զբաղմունքը հողագործութիւնն ու անասնապահութիւնն է: Յատկապէս զարգացած է խաղողագործութիւնն ու գինեգործութիւնը: Վեղիի մէջ շատ են նաեւ հանքային ջուրերու պաշարները:

Այստեղ զարգացած է յատկապէս գիւղատնտեսութիւնը: Կ'ըսեն՝ ամեն մեկ պտուղ ու բանջարեղէն հարուստ է արարատեան դաշտավայրի արեւի ոսկիով:



Ունենալով զարգացած խաղողագործութիւն՝ քաղաքը չէր կրնար չառանձնանալ նաեւ զարգացած գինեգործութեամբ: Բնակիչներէն շատերը ընտանիքով կը գբաղին այս գործով՝ նախ խաղողի այգիները կը մշակեն, ապա՝ գինի կ'արտադրեն:

Վեղիցիները համեստօրէն կ'ըսեն, որ տարածաշրջանի ամենահամեղ գինին Արեւիկի մէջ է, բայց կը նկատեն, որ ամեն հողակտորը իրեն բնորոշ համ ունի:

«Գինիի որակը մեծապէս կախուած է խաղողի տեսակէն ու գինեգործի կիրառած արհեստագիտութենէն: Մեր տարածաշրջանին մէջ եւս բաւական համեղ գինի կը ստացուի», - ըսաւ է մեկը, որ իր կեանքի 50-էն աւելի տարիները նուիրած է խաղողագործութեան ու գինեգործութեան: Անոր նախնիները Արեւմտեան Հայաստանէն եկած են, հաստատուած են Ուշանի մէջ, իսկ 1956-էն տեղափոխուած են Վեղի:

Ձեւաւորուած անաղոյթին համաձայն, խաղողի հաւաքը այստեղ ուղեկցուած է յատուկ երգ ու պարով, որուն յաջորդած է մեծ մայրիկի պատրաստած անաղաղական ճաշատեսակներու համետը: Պատմողը ժպիտով կը թերթէ յիշողութիւններու էջերը ու կը յիշէ Նիգար մեծ մայրիկի պատրաստած չորթանը, ռազաթանն ու մսով եխլին, որոնց համէն «ոչ մենք կը կշտանայինք, ոչ ալ հիւրերը»: Կ'ըսէ՝ «հիմա ալ ճահելները կը պատրաստեն, բայց առաջուայ համն ու հոտը չկայ»:

Քաղաքի հիւրերուն խորհուրդ կու տանք անպայման համտեսել անուշահամ չիրերը, չամիչն ու սուճուկը:

Հանգիստ բնութեան գիրկը

Քաղաքի բնակիչները իրենց հիւրերուն ամռան տապէս կտրուելու, զարնան ու աշնան բնութեան հրաշքը վայելելու համար կ'առաջարկեն խնճոյք կազմակերպել քաղաքի միջով հոսող Վեղի գետի ափին:



Լու համար կ'առաջարկեն խնճոյք կազմակերպել քաղաքի միջով հոսող Վեղի գետի ափին:

Վեղիի անեղծուածային գրաւորութիւնը

Վեղին կ'առանձնացնեն իր խաղողի ոսկե-կանաչ այգիներով ու անուշահամ միրգերով: Քաղաքի հիւրերուն կ'առաջարկեն երթալ Վեղիէն Դաշու գիւղ տանող ճանապարհին գտնուող Կոթուլ-բուլախ վայրը, ուր կարելի է հանքային ջուր խմել ու բուժիչ ցեխի լոգանք ընդունիլ:

Շատեր կը վստահեցնեն, որ այստեղ կը բնակին խաղաղ, հիւրասեր ու խելացի մարդիկ:

«Նոյնիսկ քանի մը ժամով այստեղ եկածը պիտի նկատ մարդոց բարութիւնն ու ազնուութիւնը», - կ'ըսեն Վեղիի բնակիչները:

«Mediamax»
(2015)

ԻՍԿ ՀԻՄԱ ԻՆՇՉ

(Շարունակուած Ա. էջէն)

իրաւունքը՝ ՄԱԿի ուխտին համաձայն: ՄԱԿի մէջ Իրանի մնայուն ներկայացուցիչը զգուշացուց, որ յաջորդ հակադարձութիւնը աւելի ծանր պիտի ըլլայ, եթէ Իսրայէլ յանդգնի վերստին կրակ բանալ Իրանի դէմ:

Իսրայէլեան բանակը իր կարգին յայտարարեց արձակուած անօդաչու սարքերուն եւ հրթիռներուն 99 առ հարիւրը օդին մէջ կործանելու մասին: «Միայն հեռահար հրթիռներուն մէկ փոքր մասը մուտք գործեց իսրայէլեան օդային տարածք եւ Իրան չյաջողեցաւ կործանել Նեկեւի մէջ իր թիրախաւորած գործարանը», ըսաւ իսրայէլեան բանակի բանբերը: Շտապ օգնութեան ծառայութիւնը իր կարգին յայտարարեց, թէ Նեկեւի մէջ մարդ մը ծանրօրէն վիրաւորուած է հրթիռներու պայթումէն:

Իսրայէլի ապահովական սեղմ կառավարութեան անդամներէն Պենի Կանց շեշտեց, որ Իրան յարմար պահուն է պատշաճ ձեւերով պիտի վճարէ իր կատարած վտանգաւոր արարքին սուղ գինը: Ազգային անվտանգութեան հարցերու նախարար Իթմար Պլն Դաֆիր իր կարգին անհրաժեշտ համարեց Իրանին ջախջախիչ հակահարուած տալը: Իսկ արտաքին գործերու նախարարութիւնը զգուշացուց, որ «Իրան Իսրայէլի դէմ պատերազմ սկսաւ, սակայն մենք զայն պիտի աւարտենք մեր արժեւորումին համաձայն»: Իսրայէլեան լրատուամիջոցներ երկ գիշեր կը խօսէին 48 ժամերու ընթացքին գործողութեան մը հաւանականութեան մասին:

Իսրայէլցի պատասխանատուներու համաձայն, ամերիկեան ու բրիտանական կործանիչներ անօդաչու սարքերուն մեծամասնութիւնը կործանած են Իրաքի եւ Սուրիոյ սահմանային գոտիին վրայ, իսկ Միացեալ Թագաւորութեան վարչապետ Ռիշի Սունսք հաւաստիացուց, որ բրիտանական կործանիչներ եւս մասնակցած են Իրանի հարուածները ձախողելու աշխատանքին: Մինչ Իսրայէլեան բանակը նշեց, որ «Ֆրանսա եւս մասնակցած է Իրանի յարձակումը խափանելու եւ Իսրայէլը պաշտպա-

նելու ջանքերուն»: Յորդանանի կառավարութիւնը իր կարգին յայտարարեց, թէ Իրանի յարձակումին ընթացքին հակաօդային պաշտպանութիւնը խոչընդոտած է Յորդանանի օդային տարածքը խախտած թռչող սարքերը:

Իրանեան յարձակումին պատճառով քանի մը ժամ ցնցուեցաւ տարածաշրջանի օդակայաններուն բնական աշխատանքը: Իսրայէլեան օդակայաններուն կողքին, կիրակի արեւածագի ժամերուն փակուեցան նաեւ Իրաքի, Յորդանանի, Սուրիոյ եւ Լիբանանի օդային տարածքներն ու օդակայանները, ինչ որ խափանեց օդանաւային թռիչքներուն ժամանակացոյցը: Պէրլուքի եւ շրջանի միւս օդակայաններուն աշխատանքը բնականոնացաւ կիրակի



առաւօտեան, բացի Իրանէն, ուր իսրայէլեան հաւանական հարուածի մտապախութեամբ երկ փակ մնաց օդային տարածքը: Իսկ Գերմանիոյ օդանաւային Lufthansa ընկերութիւնը մինչեւ երկուշաբթի առկայից Պէրլուք, Ամման եւ Արաբիլ եւ Թել Աւիւ ուղղուող իր թռիչքները:

